ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ VIII, № 3, 1955 Биол. и сельхоз. науки

ԿԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հ. Գ. Բատիկյան, Դ. Պ. Զալախյան

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԵՓԱՆԱՎԱՆՈՒՄ

Մեր ռեսպուբլիկայի անասնապահության կերային կայուն բազա ստեղծելու գործում մեծ նշանակություն ունի սիլոսային կուլտուրաների մշակման տարածությունների ընդարձակումը: Կերային բույսերից առանձնապես որակյալ կանաչ կեր ու սիլոս է տալիս եգիպտացորենը:

Եգիպտացորենը լավ է աճում մեր ռեսպուբլիկայի տարբեր շրջաններում: Մ. Գ. Թումանյանի, Գ. Ա. Աղաջանյանի, Հ. Գ. Նուրիջանյանի, Հ. Տ. Ամրատյանի, Հ. Թ. Մեսրոպյանի ուսումնասիրությունները, ինչպես նաև առաջավոր կոլտնտեսությունների փորձը ցույց են տալիս, թե Հայկական ՍՍՌ-ի կլիմայական պայմանները որքան նպաստավոր են այդ կուլտուրայի մշակության համար:

Մեր փորձերը կատարվել են Ստեփանավանի պայմաններում 1954թ. եգիպտացորենի Սպիտակատամ № 10, Հյուսիս-կովկասյան դեղնատամ № 1, Գրուշևսկի, Հյուսիս-դաղստանյան սորտերի վրա: Մեր նպատակն է եղել ուսումնասիրել եգիպտացորենի բույսերի վարքագիծը, նրանց աճման ընթացքը, ինչպես նաև կենսականությունը Ստեփանավանի պայմաններում ցանքի տարբեր ժամկետներում՝ 20/IV, 14/V, 28/VII 1954 թ.:

Ինչպես ցույց են տալիս նախնական ուսումնասիրությունները (աղ. 1), եգիպտացորենի բույսերը Ստեփանավանի պայմաններում ինտենսիվ կերպով սկսում են աճել հուլիս և օգոստոս ամիսներին: Այսպես օրինակ, Սպիտակատամ № 10 սորտի բույսերի բարձրությունը 14/V—1954 թ. ցանքի դեպքում 15/VI եղել է 7 սմ, տերևների երկարությունը՝ 13,5 սմ, տերևների լայնությունը՝ 1,7 սմ, (չափվել է տերևի ամենալայն մասը), 30/VI նույն հաջորդականությամբ եղել է 15,5 սմ, 28,4 սմ, 3,4 սմ, 25/VII 69 սմ, 52,9 սմ, 5,3 սմ, 25/VIII 115 սմ, 62,3 սմ, 6,5 սմ: Նման աճման տեմպ մենք տեսնում ենք նաև Հյուսիս-կովկասյան № 1, Գրուշևսկի և Հյուսիս-դաղստանյան սորտերի մոտ: Եվ այդ հասկանալի է. հուլիս և օգոստոս ամիսներին եղանակները տաքանում են, ցերեկվա տևողությունը երկարում է, եգիպտացորենն էլ սկսում է ավելի արագ աճել և տալ հուրաններ ու կողրեր:

Բազմաթիվ հետազոտողներ ցույց են տվել, որ ցանքի համար ստանդարտ ժամկետների կիրառումը և շտապողականությունը վնաս են հասցնում բույսերի բերքատվությանը: Հատկապես այդ տեղի է ունենում այն դեպքում, երբ հաշվի չեն առնվում տվյալ շրջանի կլիմայական պայմանները:

Նույնը տեսնում ենք նաև մեզ մոտ եգիպտացորենի տարբեր ժամ- կետների ցանքի դեպքում։ Այսպես, օրինակ, երբ Սպիտակահատ № 10 սոր- տը (աղ. 2) ցանվել է 20/IV—54թ., բույսերի միջին բարձրությունը բեր-

Աղյուսակ

Եգիպտացորենի բույսերի ուսումնասիրությունը աճման տարբեր շրջաններում
1954 թ.

Սորտերի անունները	15/VI			30/VI			25/VII			25/VIII		
	բույսի միջին բարձր. սմ-ով	տերևի միջին լայն. սմ-ով	տերևի միջին երկար. սմ-ով	բույսի միջին բարձր. սմ-ով	տերևի միջին լայն. սմ-ով	տերևի միջին երկար. սմ-ով	բույսի միջին բարձր. սմ-ով	տերևի միջին լայն. սմ-ով	տերևի միջին երկար. սմ-ով	բույսի միջին բարձր. սմ-ով	տերևի միջին լայն. սմ-ով	տերևի միջին երկար. սմ-ով
Սպիտակահատ № 10	7,0	1,7	13,5	15,5	3,4	28,4	69	5,3	52,9	115	6,5	62,
Հյուսիս-կովկասյան դեղնահատ № 1	6,0	1,6	12,3	16,0	2,8	28,4	100	8,4	79,0	165	9,4	81,
Դրուժեսկի	4,7	1,5	12,7	16,0	3,5	30,2	100	9,0	79,9	150	9,0	82,
Հյուսիս-դաղստայան	7,2	1,8	18,0	16,0	3,5	44,0	120	10,0	60,0	105	11,2	65,

քահավաքի ժամանակ (25/IX) եղել է 125 սմ, կշիռը կողրերի հետ միասին 277 գ, մեկ կողրի կշիռը՝ 111 գ, կողրերի երկարությունը՝ 18 սմ, իսկ եր- ցանքը կատարվել է 14/V—54 թ., նույն հաջորդականությամբ եղել է 15 սմ, 408 գ, 160 գ, 20 սմ։ Նման տարբերություններ մենք տեսնում են նաև ուսումնասիրվող մյուս 3 սորտերի մոտ (աղ. 2)։

Աղյուսակ 2

Եգիպտացորենի բույսերի աճման ցուցանիշները ցանքի տարբեր ժամկետներում
1954 թ.

Սորտերի անունները	Ցանքի ժամկետը	Բույսի բարձրութ. սմ-ով	Բույսի կշիռը գ-ով	կողրի կշիռը գ-ով	կողրի երկարութ. սմ-ով	կանաչ մասսայի բերքը ց/հ
Սպիտակահատ № 10	20/IV	125	277	111	18	110,8
»	14/V	150	408	160	20	163,2
Հյուսիս-կովկաս. դեղնահատ № 1	20/IV	190	619	92	18	247,6
»	14/V	210	764	93	18	305,6
Դրուժեսկի	20/IV	170	515	107	16	206,0
»	14/V	180	696	169	19	278,4
Հյուսիս-դաղստայան	20/IV	130	325	153	17	130,0
»	14/V	150	439	166	17	175,6

Նշանակում է, եգիպտացորենի ցանքի ժամանակ պետք է անպայմա հաշվի առնել տվյալ շրջանի պայմանները, քանի որ, միևնույն է, վա ցանքի դեպքում սերմերը երկար ժամանակ մնալով խոնավ հողի մեջ, ս են ծլում և բույսերն էլ ունենում են ոչ բարձր կենսականություն։

Պետք է հաշվի առնել նաև այն, թե մեզ համար ինչն է ավելի կա րևոր՝ կանաչ մասսան սիլոսի համար, թե հատիկները, որովհետև կան սո

տեր, որոնց կողրերի կշիռը բարձր է, և կան սորտեր էլ, որոնց վեգետատիվ մասսայի կշիռն է բարձր. օրինակ՝ Հյուսիս-կովկասյան № 1 սորտի ամբողջ բույսը կշռում է 764 գ, որից 93 գ. կողրի կշիռն է, Գրուշևսկի սորտի բույսը կշռում է 696 գ, որից 169 գ. կողրի կշիռն է, իսկ Հյուսիս-գագոտյան սորտի բույսերն իրենք ունեն ցածր կշիռ՝ 439 գ, որից 166 գ կազմում է միայն կողրի կշիռը (աղ. 2)։

Եթե ստացված տվյալները վերածենք մեկ հեկտարից ստացվող կանաչ մասսայի, ապա կտեսնենք, որ ուսումնասիրվող սորտերի մոտ (14/V 54 թ. ցանքի դեպքում) այն կազմում է 163,2—305,6 ց/հ։ Իհարկե, այս քանակությունն առանձնապես մեծ չէ, բայց ցույց է տալիս, որ նախացանքային և հետացանքային ագրոտեխնիկական կանոնները ճիշտ կիրառելու, բույսերը լավ խնամելու և հողը պարարտացնելու դեպքում հնարավոր կլինի եգիպտացորենի կանաչ մասսայի բերքը հասցնել մինչև 400 ց/հ։

Աղյուսակ 3

Եգիպտացորենի կանաչ մասսայի բերքը խոզանացանի դեպքում 1954 թ.

Սորտերի անունները	Բույսերի բարձրությունը սմ-ով	Բույսերի կշիռը գ-ով	Կանաչ մասսայի բերքը ց/հ
Սպիտակհատ № 10	54	196	78,4
Հյուսիս-կովկասյան դեղնահատ № 1	66	185	74,0
Գրուշևսկի	64	185	74,0
Հյուսիս-գագոտյան	64	137	54,8

Մեզ հետաքրքրում էր նաև այն հարցը, թե ամռան ցանքի դեպքում եգիպտացորենի բույսերը ինչպես կաճեն Ստեփանավանի պայմաններում։ Դրա համար 28/VII—54 թ. անջրդի պայմաններում ցանեցինք նույն 4 սորտերի հատիկները։ Ցանքից հետո տեղացին ոչ տեսական անձրևներ (Ստեփանավանի պայմաններում օգոստոս ամսին անձրևները սակավատիպ են լինում), որոնք օգոստոս ամսի բարձր ջերմաստիճանի հետ միասին նպաստեցին հատիկների արագ ծլմանը և բույսերի ինտենսիվ աճմանը։ Սակայն սեպտեմբեր ամսին բույսերի աճը մասամբ դանդաղեց, որովհետև ցերեկվա, և գիշերվա ջերմաստիճանների միջև տարբերությունները զգալիորեն մեծացան։

Այստեղ հետաքրքիր է նշել, որ երբ ցանքը կատարվել է 28/VII 54 թ., ապա բույսերն ավելի արագ են աճել, քան այն դեպքում, երբ ցանքը կատարվել էր 20/IV։

Բացի այդ, թեև բույսերը ցածր էին, բայց նրանց մի մասն սկսել էր հուրանակալել, իսկ որոշ բույսեր էլ արդեն սաղմնային վիճակում ունեին փոքր կողրեր։

Բերքահավաքից (28/IX—54 թ.) հետո մենք ունեինք 54—66 սմ բարձրությամբ բույսեր, որոնց կշիռը տարբեր սորտերի մոտ կազմում էր 137—196 գ, որը եթե վերածենք 1 հեկտարի կատացվի 54,8—78,4 ց/հ կանաչ մասսա, (աղ. 3)։ Նախնական հետազոտությունները ցույց են տա-

լիս, որ լավ մշակման դեպքում եգիպտացորենի խոզանացանից ստացվող կանաչ մասսայի քանակը Ստեփանավանի պայմաններում կարելի է հասցնել մինչև 100—120 ց/հ։

Իհարկե, այս քանակն առանձնապես մեծ չէ, բայց եթե բույսերը թողնվեն մինչև այն ժամանակ, երբ սկսում են ցրտահարությունները անկասկած, վեգետատիվ մասսան կավելանա և մեկ հեկտարից ստացվող կանաչ մասսայի կշիռը կմեծանա։

Պետք է նշել նաև, որ եգիպտացորենի ամառային ցանքը կարելի է կիրառել Ստեփանավանի շրջանում միայն այն դեպքում, եթե ցանքի կարտոֆիլի որևէ վաղահաս սորտ, ինչպես, օրինակ, Էպրոն սորտն է, որի պալարները հասունանում են հուլիս ամսվա ընթացքում։

Ելնելով վերը բերված տվյալներից, կարելի է անել հետևյալ եզրակացությունը.

Եգիպտացորենը ճիշտ ժամկետին ցանելու և մշակության ժամանակ ագրոտեխնիկայի կանոնները ճիշտ ու ժամանակին կիրառելու դեպքում Ստեփանավանի պայմաններում կարելի է ստանալ ինչպես կողերի, այնպես էլ կանաչ մասսայի լավ բերք։ Եգիպտացորենի ամառն ցանքի դեպքում ստացվող կանաչ մասսայի քանակը մեծ չէ։ Լավ սորտերի, ինչպես նաև հիբրիդային սերնդի ընտրության դեպքում է՛լ ավելի կարելի է բարձրացնել սովորական և խոզանացան եգիպտացորենի բերքը Ստեփանավանում։

Վ. Մ. Մոլոտովի անվան
Երևանի Պետական համալսարանի
կենսաբանական ֆակուլտետ,
Գենետիկայի և դարվինիզմի ամբիոն։

Ստացվել է 20 II 1955 թ.

Г. Г. Батикян, Д. П. Чолахян

Изучение культуры кукурузы в Степанаване

Резюме

Опыты проводились в 1954 г. в условиях Степанавана над сортами кукурузы: Белозерная № 10, Северо-Кавказская желтозерная № 1, Грушевская, Северо-даготская. Посев производился в три срока: 20.IV, 14.V и 28.VII—54 г.

Исследования показывают, что по сравнению с посевом 20.IV—при посеве 14.V был получен высокий урожай кукурузы. При обыкновенной обработке посева урожай зеленой массы составляет 163,2—305,6 ц/га.

28.VII был произведен также пожнивной посев. урожай убран 28.IX, и составил 54,8—78,4 ц/га зеленой массы. Опыты показали, что после уборки раннеспелых сортов картофеля (например сорта Эпрон) в Степанаване можно рекомендовать пожнивной посев кукурузы для получения второго урожая.

Наши предварительные исследования показывают. что при хоро-

шей агротехнике и ухода за растениями можно получить от весеннего посева в Степанаванском районе до 400 ц/га зеленой массы кукурузы, а при пожнивном посеве вес зеленой массы можно довести от 100 до 120 ц/га.

Получить высокий урожай зерна и зеленой массы кукурузы в Степанаване с целью увеличения кормовых ресурсов животноводства можно путем подбора соответствующих сортов кукурузы, а также семенами гибридного происхождения.